Հավելված 2
2023թ. «01» «26»-ին
Կնքված N ԴՏՊ-1160-11009/Ե-1/23 պայմանագրի

Դրամաշնորհային հաշվետվություն N ԴՏՊ-1160-11009/Ե-1/23

1. Ընդհանուր տեղեկատվություն

Ծրագրի անվանումը	Տեսողության խնդիրներ ունեցող անձանց սոցիալ-հոգեբանական վերականգնում
Դրամաշնորհի N	ԴՏՊ-1160-11009/Ե-1/23
Դրամաշնորհատու կազմակերպություն	«Լիարժեք կյանք» ներառական հասարակության խթանման հասարակական կազմակերպություն
Ծրագրի իրականացման ժամանակատված	01.01.2023 – 31.12.2023
Հաշվետու ժամանակահատված	01.01.2023 – 31.12.2023
Ներկայացման օր	17.01.2024
Հաշվետվության պատասխանատու	Գոհար Գևորգյան Գործառնական տնօրենի պարտականությունները կատարող

2. Բովանդակային հաշվետվություն

2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների շրջանակներում կատարման ենթական գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար

Միջոցառում 1. Ընդունելության կազմակերպում, կարիքների գնահատում
Միջոցառում 2.Կենտրոնում և/կամ կենտրոնի տարածքից դուրս/դաշտային աշխատանք:
Միջոցառում 3. Սեմինար հանդիպումներ և միջոցառումներ
Միջոցառում 4. Հանրային միջոցառումներ և ԶԼՄ լուսաբանում
Միջոցառում 5. Սոցիալ-իրավական խորհրդատվություն
Միջոցառում 6. Մարզամշակույթային ամառային ճամբար

2.2 **Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի /Գանտի աղյուսակ/ և միջոցառումներ, նշելով՝ Ձեր կողմից կատարված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Միջոցառում 1. Համաձայն աշխատանքային պլանի /Գործողություն 1/ իրականացվել է թվով 29 շահառուների ընդունելության կազմակերպում: Բազմամասնագիտական թիմի կողմից իրականացվել է թվով **29** շահառուի կարիքների բազմակողմանի գնահատման փաստաթղթավորում՝ ԱՀԿ ՖՄԴ մեթոդաբանությամբ, և անհատական զարգացման պլանների մշակում: Գործողությունը 1-ը /համաձայն աշխատանքային պլանի/ ամբողջությամբ կատարված է:

Միջոցառում 2. Համաձայն աշխատանքային պլանի /Գործողություն 2/ հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են՝

- Նախապատրաստական աշխատանքներ տեսողության խնդիրներ ունեցող անձանց պատրաստելու դաշտային աշխատանքներին լիարժեքորեն մասնակցելուն՝ անհատական զարգացնող պարապմունքների միջոցով, որպեսզի կարողանան գրագետ օգտագործեն սպիտակ ձեռնափայտը, զգան տարածությունը՝ զգայարանների միջոցով, ինչպես նաև շարունակում են սովորել օգտվել հեռախոսից և համակարգչից
- Տեսողության խնդիրներ ունեցող անձանց շահառուները ձեռք են բերում սպիտակ ձեռնափայտի օգտագործման տեխնիկաների տեսական և գործնական հմտություններ իրենց նախընտրած վայրերում հմտորեն կողմնորոշվելու ժամանակակից հնարքներ,անկախ և ինքնուրույն ապրելու փորձառություն:
- տեսողության խնդիրներ ունեցող շահառուները սովորում են ինքնուրույն օգտվել համակարգչից և սմարթֆոններից էկրանի ընթերցող ձայնային ծրագրերի կիրառմամբ, որը նպաստում է կրթական, սոցիալական և կենցաղային խնդիրների լուծմանը:

Միջոցառում 3 Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել է 2 սեմինար, կենտրոն հաճախող շահառուների և նրանց ընտանիքի անդամների համար՝

- 18.03.2023թ - սեմինարի թեմա՝ «Տեսողության խնդիրներ ունեցող երեխաների կրթական գործընթացի իրականացումը հատուկ և ներառական կրթություն իրականացնող դպրոցներում», սեմինարը վարեց կենտրոնի տիֆլոմանկավարժ՝ Ալվարդ Սահակյան, մասնակիցների թիվ՝ 9:
- 09.03.2023թ - սեմինարի թեմա՝ «Վեբկայքերի կառուցվածքը և հասանելիությունը տեսողության խնդիրներ ունեցող անձանց համար՝ Tiflotech.am կայքէջի օրինակով», սեմինարը վարեց կենտրոնի ՏՀՏ մասնագետ՝ Վահիկ Արզումանյանը, մասնակիցների թիվ՝ 10:
- 25.05.2023թ – սեմինարի թեմա՝ «Ուղեկցող շների դերը տեսողության խնդիրներ ունեցող անձանց կյանքում», դասընթացավար՝ տիֆլոմանկավարժ մասնակիցների թիվ՝ 12:
- 06.06.2023թ **–** սեմինարի թեմա՝ «Ձայնային օգնականներ», դասընթացավար՝ ՏՀՏ փորձագետ՝ Վահե Արզումանյան, մասնակիցների թիվ՝ 6:
- 14.09.2023թ - «Լիարժեք կյանք» ՀԿ-ի ՏՀՏ մասնագետ Վահե Արզումանյանը ՏԽՈՒ անձանց համար անցկացրել է սեմինար՝ «Օնլայն բանկային հավելվածների կիրառումը» թեմայով:
- 12.12.2023թ - «Լիարժեք կյանք» ՀԿ Երևանի կենտրոնի տիֆլոմանկավարժ Ալվարդ Սահակյանը հաշմանդամություն ունեցող անձանց ծնողներին ներկայացրել է սեմինար «Խելամիտ հարմարեցումներ /անձնական օգնական/ ՀՈՒԱ ներառման կարևոր օրենքները» թեմայով: Մասնակիցների թիվ՝ 8:

- 12.12.2023թ - «Լիարժեք կյանք» ՀԿ Երևանի կենտրոնի ՏՀՏ մասնագետ Վահե Արզումանյանը հաշմանդամություն ունեցող անձանց ծնողներին ներկայացրել է սեմինար «Էլեկտրոնային հարցումների և գրանցումների ֆորմաներ» թեմայով: Մանսակիցների թիվ՝ 8:

Միջոցառում 4.

- Փետրվարի 6-ին «Լիարժեք կյանք» ՀԿ-ն «Դեպի ներառական Հայաստան» ծրագրի շրջանակներում Երևանի թիվ 17 հատուկ դպրոցում կազմակերպեց «Սպորտ՝ բոլորի համար» միջոցառումը: Միջոցառման ընթացքում հաշմանդամություն ունեցող շուրջ 60 անձինք ծանոթացան բոչիա, անվասայլակով բասկետբոլ և կույր ֆուտբոլ ադապտիվ սպորտաձևերի հետ, այնուհետև մասնակցեցին ընկերական և մրցաշարային խաղերին:
- Հունիսի 15-ին կենտրոնի թվով 8 շահառուներ մասնակցել են «Կարիտաս Արեգակ հիմնադրամ»-ի կողմից կազմակերպված «Մրցելու հնարավորություն» սպորտային միջոցառմանը:
- Սեպտեմբերի 29-ին «Լիարժեք կյանք» ՀԿ Երևանի կենտրոնի թվով 8 շահառու մասնակցել են Մատենադարանի աշխատակիցների կողմից անցկացվող «Ինչպես մատչելի և հասանելի դարձնել Մատենադարանը ՏԽՈՒ անձանց համար» հանդիպում- քննարկմանը:
- «Լիարժեք կյանք» ՀԿ Երևանի կենտրոնի տիֆլոմանկավարժ՝ Ալվարդ Սահակյանը ապրիլի 4-ին հարրցազրույց է տվել CivilNet լրատվական կայքին, որտեղ անդրադարձ է կատարել «Տեսողության խնդիրներ ունեցող անձանց սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծրագրի շրջանակներում տրամադրվող մասնագիտական ծառայություններին: https://www.youtube.com/watch?fbclid=IwAR05cvi5LpaBo23GI5ztUSaHP9OZqMJZCzlC9DVJ6gGS1jOEX5_bquKphpo&v=QHI_wn2_8zw&feature=youtu.be

Միջոցառում 5. Համաձայն աշխատանքային պլանի /Գործողություն 5/ հաշվետու ժամանակահատվածում թվով **45** քաղաքացու տրամադրվել է սոցիալ-իրավական, առողջապահական խնդիրներին առընչվող, պետական հավաստագրով աջակցող սարքեր և պարագաների ձեռք բերման խնդիրների վերաբերյալ աջակցություն և խորհրդատվություն: Գործողությունը 5-ը /համաձայն աշխատանքային պլանի/ ամբողջությամբ կատարված է:

Միջոցառում 6. Համաձայն աշխատանքային պլանի /Գործողություն 6/ կենտրոնի թվով **4** շահառուներ իրենց 7-օրյա ամառային հանգիստն են անցկացրել Ստեփանավանի «Լիարժեք կյանք» ամառային ներառական ճամբարում:

Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝

Կից ներկայացվում է «ՍՊՈՐՏ ԲՈԼՈՐԻ ՀԱՄԱՐ» միջոցառման լուսաբանման հղումները մի շարք լրատվամիջոցների կողմից:
Factor.am - https://factor.am/608652.html?fbclid=IwAR3ql-2rRF2IrI9PMt7xvnCkDk0m6cwKUBi2EVzw5Br1Oew5VxH11dxjNX4
Sputnik Armenia - https://armeniasputnik.am/20230206/futbvol-u-bvochia-erevanum-marzatvon-er-hashmandamutjun-unecoghneri-hamar-54922586.html?fbclid=IwAR26A8LJp3VHs0MqRjtOYZCmRRLMJMP_gARhhMAOzlnW2H8XT8rbKBOuMPY
Կից ներկայացվում է կենտրոնի ամենօրյա աշխատանքները լուսաբանող ֆեյսբուքյան խմբի հղումը https://www.facebook.com/groups/452821606274977/

2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատածում քաղաք դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը

Հաշվետու ժամանակահատվածում խնդիրներ չեն առաջացել:

2.5 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար

- 27.06.2023թ-ին «Լիարժեք կյանք» ՀԿ Երևանի կենտրոնի տիֆլոմանկավարժ Ալվարդ Սահակյանը մասնակցել է ՀՄԿ-ի կողմից «Զարգացման և ֆունկցիոնալ նպատակների իրականացումը պարապմունք» թեմայով վեբինարին:
- 10.06.2023թ-ին . «Լիարժեք կյանք» ՀԿ-ի թիմը մասնակցել է «Տեսողության խնդիրներ ունեցող անձանց թվային գրագիտության բարձրացումը Հայաստանում» ծրագրի շրջանակներում ստեղծված Tiflotech.am կայքի շնորհանդեսին:
- 19.07.2023թ –ին «Լիարժեք կյանք» ՀԿ Երևանի կենտրոնի տիֆլոմանկավարժ Ալվարդ Սահակյանը՝ մասնակցել է Ներառական իրավական կոալիցիայի կողմից կազմակերպած «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՀՀ օրենքի ընդունումից 2 տարի անց» համաժողովի քննարկմանը:
- 10.07.23թ.-ին «Լիարժեք կյանք» ՀԿ Երևանի կենտրոնի տիֆլոմանկավարժ Ալվարդ Սահակյանը մասնակցել է «Հաշմանդամություն ունեցող երեխաների սոցիալական ներառման խթանում» ծրագրի ամփոփիչ հանդիպման քննարկմանը:
- 15-16.07.2023-ին «Լիարժեք կյանք» ՀԿ Երևանի կենտրոնի տիֆլոմանկավարժ Ալվարդ Սահակյանը մասնակցել է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ջատագովություն» երկօրյա աշխատաժողովին:
- 09.08.2023թ –ին «Լիարժեք կյանք» ՀԿ Երևանի կենտրոնի տիֆլոմանկավարժ Ալվարդ Սահակյանը՝ մասնակցել է ՀՖՖ Տեխնիկական Կենտրոն-Ֆուտբոլի ակադեմիայում ճանաչողական սեմինար-քննարկմանը՝ նվիրված հաշմանդամային ֆուտբոլին:
- 28-29.08.23թ.-ին «Լիարժեք կյանք» ՀԿ Երևանի կենտրոնի տիֆլոմանկավարժ Ալվարդ Սահակյանը մասնակցել է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների օրակարգ» ՀԿ-ի կողմից կազմակերպված «Համընդանուր դիզայն և մատչելիություն» երկօրյա դասընթացին:
- 18.09.2023թ.-ին «Լիարժեք կյանք» ՀԿ-ի տիֆլոմանկավարժ՝ Ալլա Սահակյանը «Իրական աշխարհ, իրական մարդիկ» ՀԿ-ի կողմից կազմակերպած «ՄԻԱՎ-ով ապրող և ԹՆՕ կանանց նկատմամբ գենդերային հիմքով բռնության դեմ հակազդում ՀՀ-ում» թեմայով սեմինարին:
- 10.10.2023թ-ին կենտրոնի տիֆլոմանկավարժ՝ Ալվարդ Սահակյանը մասնակցել է «ԵՄ-ն հանուն գենդերային հավասարության բարեփոխումների աջակցության ծառայություն» ծրագրի և «Ագաթ» հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանության կենտրոն հասարակական կազմակերպության աջակցությամբ կազմակերպված «Հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքները Հայաստանում» պանելային քննարկմանը:
- 24.10.2023 թ-ին կենտրոնի տիֆլոմանկավարժ՝ Ալվարդ Սահակյանը մասնակցել է Առողջապահության համաշխարհային կազմակերպության Հայաստանյան գրասենյակի կողմից կազմակերպած «Համայնքային ռեսուրների ու երկարատև խնամքի ծառայությունների քարտեզագրում ու հզորացում» թեմայով հանդիպում քննարկմանը:

Գործառնական տնօրենի
պարտականությունները կատարող Գ.Գևորգյան

«Լիարժեք կյանք» ՀԿ նախագահ՝ Ս.Մաղաքյան

Digitally signed by MAGHAKYAN SUREN 3312720087
Date: 2024.01.17 18:07:48 AMT